



Հակոբ Պարոնյան

Ազգային շոջեր

ՎԱՀԱՆ ՊԱՐՏԻՉԱԿՑԻ

1850-ին Պարտիզակ ծնած է Վահան վարդապետ, երեսփոխան, թատրերգակ, առակախօս, այցելու եւ պատուիրակ Բարձր Հայաստանի: Այնչափ բարի գաւակ մ'էր, որ իր ծննդենէն երկու ամիս առաջ հայրը մեռաւ, իւր տղուն երեսը շտեանելու համար. երկու ամիս ետքն ալ մայրը հոգին փչեց՝ իւր գաւակին երեսը տեսած ըլլալուն համար:

Կնքահայրն, որ այսօրուան բոլոր կնքահայրերու պէս իւր սանին երկու անուն դնելու մոլութիւնն ունէր, Լիլի Կապէ անուանեց գայն, որ ըսել է Խեռ Կարապետ: Եւ արդարեւ սանն իւր առաջին անուանը հաւատարիմ մնալու համար բան մը չխնայեց. վեց տարեկան էր երբ թռչուններ, հաւեր, սագեր ու բադեր կը զարնէր նետով. երբեմն ալ ամբողջ օրերը խաղալով կ'անցունէր շուներու հետ, որոնց աչերը կը հանէր:

Թաղական խորհրդոյ որոշմամբ 1858-ին Փրկիչ կը դրկուի Կարապետ, բայց հոն ալ խելօք չնստիր. դասերը սորվելու տեղ ճանճ որսալու արհեստը կը մշակէր: Կառավարիչն, անկարող այս աշակերտն ի կարգ բերելու, անառականոց կը դնէ գայն, որպէսզի հոն սորվի իւր չգիտցած անառակութիւնները: Երկար ատեն չկրնար մնալ այս յարկին մէջ, վասն զի 1862 թուականին երբ Փրկիչը բարեկարգելու համար բոլոր աշակերտները կը վռնտուին յիշեալ վարժարանէն, Կարապետ ալ Պարտիզակ կը դառնայ:

Պարտիզակ դառնալուն պէս Կարապետ կ'ուզէ թաղականներէն վրէժ լուծել. ուստի կը սկսի անոնց եզներուն, էշերուն եւ գոմէշներուն պոչը կտրել: Թաղական խորհուրդը կը տնօրինէ, որ այս տղան նորէն Փրկիչ դրկուի եւ Կարապետ 1863-ին վերստին Փրկիչ կը մտնէ: Մէկ ու կէս տարի կը մնայ հոն եւ ամէն ուսումէ ու գիտութենէ մէկ երկու տրամ բան առնելով՝ 1865-ին խոլերայի պատճառաւ կը ստիպուի նորէն իւր քաղաքը դառնալ:

1866-ին վերստին Պոլիս կը դառնայ եւ պայտավաճառի մը քով աշակերտ կ'ըլլայ: Այն թուականին պայտավաճառները կօշկակարներէն շատ աւելի դրամ կը վաստկէին. վասն զի դրամական նեղութիւնն այն աստեանները խիստ զգալի չըլլալով՝ ձիերն ու էշերն հիմակուան պէս երկու ժամ չէին խորհեր, թէ ո՛ր կոխելու են, որպէսզի իրենց կօշիկները չհիննան եւ, հետեւապէս, չստիպուին բոկոտն քալելու: Կարապետ կարծելով, թէ այս ասպարէզին մէջ կրնայ մեծ մարդ ըլլալ՝ ինքզինքն իւր տիրոջը սիրելի ընելու համար բոլոր աշխոյժն ի գործ կը դնէր: Շատ ապրանք ծախելու համար ունեցած եռանդն զինքը ծայրայեղութեան կը մղէր. երբ կը տեսնէր այնպիսի մարդեր, որոնք դիպուածով հարստանալով, դիպուածին արդիւնքն իրենց խելքին կ'ընծայէին, կը կանչէր զիրենք ըսելով. «Հրամանեցէք, աղէկ կօշիկներ ունիմ ձեզի համար... Պարտիզակէն եկած...»:

Սակայն այսչափ աշխատութեան փոխարէն չյաջողիր իր նպատակին հասնելու: Տէրն, որ կերակուր ուտելէն վերջը չէր քալեր որպէսզի կերածը չմարսէ եւ նորէն ուտելու համար ստակէ չելնէ, գիշեր մը կը ճամբէ Կարապետն, որ անկողինը կոնակը շալկելով դուրս կ'ելնէ խանութէն: Չմոռնանք հոս յիշել, որ Կարապետ պարապոյ ժամերը կատարելագործելու կը գոհէր, ինչ որ սորվիլ սկսած էր անցեալին մէջ:

Այն, որ անկարող է իւր առաջադրած նպատակին երթալ, ականջները կը բանայ բախտին եւ անոր կոչած տեղը կը սկսի վազել: Կարապետ իւր աշխուժութեամբը կրնար թերեւս առեւտուրի մէջ մեծ մարդ ըլլալ, բախտը զինքը ուրիշ տեղ կը կանչէ. կամ երթալու է եւ կամ անօթի մեռնելու է. Թորոս բեռնակրութեան կոչում ունի. կոչումը ձայն չունի, բախտը զայն սեղանաւորութեան կը հրաւիրէ: Ես վիճաբանելու եւ դիմացինս համոզելու փափաք ունիմ. բախտը կը հրամայէ ինձ,

որ անտառաբան ըլլամ. եւ համոզելու պաշտօնն այնպիսի մէկու մը կը յանձնէ, որ իւր միտքը բացատրելու անկարող է: Դու գիտութիւններու մէջ կը կարծես առաջ երթալ. բախտն զքեզ բանաստեղծ կ'ընէ, եւ բախտին շինած բանաստեղծին պէս անճոռնի բան չկայ աշխարհիս երեսը: Արդ, այս բախտը, որ քիչ բացառութեամբ միշտ կը հրաւիրէ գմեզ այնպիսի տեղեր, ուր չենք ուզեր երթալ, վարժապետութեան կը կանչէ Կարապետն, եւ որ 1867-ին իշխաններու ընկերակցութեամբ Պոլիսէն կը մեկնի Չէթուն երթալու համար: Երբ Հալէպ կը հասնի՝ հիւանդ կ'իյնայ: Ընկերները զինքը հոն թողլով կը շարունակեն իրենց ճամբան: Ամիս մը անկողնոյ մէջ մնալէն ետքը առողջութիւնը կը գտնէ եւ էջ մը առնելով՝ վրան կը հեծնէ ու ճամբայ կ'ելնէ: Կարապետ Չէթուն կ'ուզէ երթալ, իսկ էջը հոն, ուր կանաչ խոտ կայ: Ուր որ իրարմէ տարբեր շահեր կան՝ հոն միաբանութիւնն անկարելի է: Կարապետ մարգագետնի հետ բնաւ գործ չունի. էջն ալ Չէթունէն բան չհասկնար, ոչ ալ հոն տրուելիք դաստիարակութենէն. ուստի անօթի ըլլալով ուղիղ ճամբան կը խոտորի եւ մարգագետնի մը վրայ կը գտնէ իւր Չէթունը՝ ուր նստած էին քանի մը չերքեզներ: Ասոնք այս ինքնահրաւեր ասանակին գալուստը սիրով կ'ողջունեն եւ տիրոջն ալ կ'ըսեն, թէ «Սա էջը մերն է, տես ի՞նչպէս մեզի ճանչցաւ ու եկաւ»: Իգուր կը ջանայ Կարապետ զիրենք համոզելու համար վկաներու դիմել. քրիստոնէին վկայութիւնը ի՞նչ արժէք ունի, մանաւանդ երբ էջն ալ համակրութիւն կը յայտնէ չերքեզներու: Արքատիի սոխակն հոն պատուական ճաշ մը ընելէն ետքը, մարգագետնի վրայ կ'երկնցնէ ոտներն ու գլուխը կը դարձունէ Կարապետին, որ անօթի ետ կը դառնայ մօտ գիւղ մը երթալով գլխուն ճարը փնտռելու համար: Մօտակայ գեղի մը մէջ ձի մը կը գտնէ եւ անով վերստին կը սկսի ուղեւորիլ դէպի Չէթուն, ուր կը հասնի քսան օրէն: Տարի ու կէս հոն դասատութեան պաշտօն վարելէն ետքը 1870-ին Չէթունէն կը մեկնի Եգիպտոս կ'երթայ, Եգիպտոսէն ալ Կ. Պոլիս:

1871-ին Շահ Նազարեան վարժարանի աշակերտները ընկերութիւն մը ունէին, որ Չէթունի մէջ վարժարան մը բացած էր: Սոյն ընկերութենէ կ'աղաչուի Կարապետ նորէն Չէթուն դառնալ եւ հոն դասատութիւն ընել ընկերութեան վարժարանին մէջ: Կարապետ կ'ընդունի այս առաջարկութիւնը եւ ճամբայ կ'ելնէ, բայց երբ կ'իմանայ Եգիպտոսի մէջ՝ թէ զրպարտուած էր Չէթունի ժողովուրդը գրգռելու ամբաստանութեամբ եւ պիտի ձերբակալուէր, իսկոյն աշխարհականի

հագուստը կը հանէ եւ կրօնատրի գգեստներ հագնելով շունչը Երուսաղէմ կ'անէ:

1871-ին սարկաւագ կը ձեռնադրուի հոն եւ 1872-ին Գագիկ Բ. թատրերգութիւնը կը գրէ: Այս թատրերգութեան անձերուն մէջ կին մ'ալ կար. վանական մամուլը չուզեց, որ կին գտնուի վանքի մէջ տպուած թատրերգութեան մէջ, ուստի կինը հանեց եւ տեղը մանչ դրաւ: Սարկաւագ ձեռնադրուելուն պէս վանքը բարեկարգելու կը ձեռնարկէ: Խնդիր կը յարուցանէ, թէ ս. պատրիարքն պարտաւոր է հաշի տալ միաբաններուն, թէ ընտրութիւններն քուէարկութեամբ կատարուին:

Երբ իւր առաջարկութիւնները կը մերժուին՝ բոլոր ուժովը կը սկսի պռռալ, թէ ուր խտրութիւն կայ՝ հոն արդարութիւն չկայ, եւ ուր արդարութիւն չկայ՝ հոն Աստուած չկայ, եւ ուր Աստուած չկայ՝ հոն Աստուծոյ պաշտօնէի գործ չկայ: Ս. պատրիարքն, որուն ականջներն արդարութիւն եւ աստուած բառերը լսելու վարժուած չէին, անմիջապէս Կարապետը կարգէն կը լուծէ եւ պարոն Կարապետը Պոլիս կու գայ եւ կը սկսի հոն ֆէսով պտտիլ: Ճարը հատնելով կը դիմէ Ղալաթիոյ օճախին, որ նոր կազմակերպուելու վրայ էր. անոր անդամ կը գրուի, մշեցիները Խրիմեանին դէմ կը գրգռէ. Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրատեանին Եկեղեցական Պատմութիւնն կը քննադատէ իբրեւ մոլորական, Երուսաղէմայ պատրիարքէն վրէժ լուծելու նպատակաւ: Այսպէս, օճախին ծառայելէն ետքը, անոր պետին կը դիմէ վարձատրուելու համար: Օճախին գլուխը գիշեր մը Հասգիղ ամեն. Ներսէս ս. պատրիարքին այն ատեն տեղապահ տունը կ'երթայ եւ հետեւեալ անուանումները կ'առաջարկէ. «Մամբրէ եպիսկոպոսն Մշոյ սուրբ Կարապետի վանահայր անուանելու է. Իգմիրլեան Մատթեոս վարդապետն եպիսկոպոսութեան բարձրացնելու է. Կ. սարկաւագը վարդապետ ձեռնադրելու է»:

Խառն ժողովը հետեւեալ օրը այս առաջարկութիւնները կ'ընդունի եւ յաջորդ օրը Կարապետ սարկաւագը կ'ըլլայ Վահան վարդապետ:

1874-ին Մամբրէ եպիսկոպոսին ետեւէն Մուշ կը դրկուի, որպէսզի վանահօր հետ աշխատելով վանքը բարեկարգէ: Քառասուն աշակերտի համար տարեկան տասն վարտիք եւ քսան շապիկ կ'որոշէ. այս հաշուով չորս աշակերտ մէկ

վարտիք պիտի հագնէին եւ երկու հոգի մէկ շապիկ: Տնտեսագիտութեան մասին վանահօր որոշումն արդարեւ գովելի էր. բայց Վահան վարդապետ չուզեր համաձայնիլ այս որոշման, տեղեկագիր մը կը շինէ Պոլիս կու գայ:

1875-ին Բումելի Հեսարի վարժարանին դասատու կ'անուանուի: Տեղեկագիր մ'ալ հոն կը շինէ:

1876-ին Իսկիտար Սուրբ խաչի վարժարանին տեսուչ կը կարգուի եւ ասագ հինգշաբթի օրը ժողովրդեան քարոզ մը կը խօսի սապէս.

«Ժողովուրդ, դպրոցը գէշ վիճակի մէջ է. աղաները աղէկ չեն նայիր. քանի մը օրէն վարժարանը պիտի փլի, թաղականն անհոգ է»:

Այս քարոզին վրայ ժողովուրդը Խորհրդարանը խուժեց, աղաները վար առաւ: Նոր ընտրութիւն եղաւ, նորէն տեսուչի պաշտօն առաւ: Դարձեալ լուծուեցաւ, նորէն ընտրուեցաւ եւ յիշեալ թաղը քանի մը անգամ տակնուվրայ ընելէն ետքը հեռացաւ անկից:

Այս իրարանցումի մէջ ս. պատրիարքն այցելուներ դրկել կ'ուզէր Կարնոյ կողմերը: Վարդապետին մէկն երկու հազար ոսկի կը պահանջէր այս պաշտօնն յանձն առնելու համար, եպիսկոպոս մը Պոլիսէն ճամբայ ելնելու համար երեք հազար ոսկի ուզելէն ետքը, չորս ձի, երկու կառք եւ տասներկու շիշ լաւանտայ կը պահանջէր Հայաստանի մէջ գաղթականութեան առաջքն առնելու համար: Երբ պատրիարքն յուսահատած լապտեր ի ձեռին կրօնաւոր կը փնտռէր՝ Վահան վարդապետ կ'ընդունի այս պաշտօնն եւ իբրեւ փոխարինութիւն ուրիշ բան չպահանջէր, այլ միայն հրացան մը եւ տասներկու շիշ օղի: Ահա հոս է Ազգային Ջոշերուն մէջ Վահան վարդապետին մտնելուն գաղտնիքը: Անմիջապէս ճամբայ կ'ելնէ այս այցելուն հրացանն ուսէն կախուած: Ճամբան երբեմն որսորդութիւն ընելով, երբեմն երգելով, երբեմն խմելով Դերջան կը հասնի, ուր Սրբրիւր սուրբ Թորոս եկեղեցին կ'իջնէ: Հետեւեալ օրը ծառի մը վրայ կ'ելնէ եւ կը յորդորէ ժողովուրդը, որ չգաղթէ: Կարին կը մտնէ ճիշտ այն օրը, ուր իրմէ ժամ առաջ մտած էր Հայկական խնդրոյն անյաջողութեան լուրը: Կ'ուզէ հոն եկեղեցոյն մէջ կարդալ այն կոնդակն, որ պատրիարքարանէ տրուած էր իրեն եւ որ նպատակ ունէր ժողովուրդը համոզել չգաղթելու համար: Յարութիւն եպիսկոպոս

կ'ընդդիմանայ. այցելուն ձայն չհաներ, հրացան եւ օդի շիշն առնելուն պէս ճամբայ կ'ելնէ դէպի Կարս: Հոն կը ներկայանայ Լազարեֆին, որ կը դրկէ զինք տէր Ղուկասֆին, որ Տփղիսի ճամբան ցոյց կու տայ իրեն: Ալաշկերտէն եւ Պայագիտէն լուր կու գայ Տփղիսու Յանձնաժողովին յայտնելով, որ այն տեղի ժողովուրդն խմբովին Ռուսաստան պիտի գաղթէ: Վեհափառ կաթողիկոսը կը քնանայ: Այվազովսքին, Փորձի, Մշակի եւ Մեղուի խմբագիրներն կ'աղաչեն այցելուն, որ Ալաշկերտ եւ Պայագիտ երթայ: Կ'ընդունի Վահան վարդապետ, բայց կոնդակին մէջ Ալաշկերտ եւ Պայագիտ յիշուած չըլլալով՝ կ'որոշէ նախ Բիւրական երթալ կաթողիկոսին եւ ապա իւր պաշտօնին: Բիւրական կ'երթայ. կ'արթնցնեն կաթողիկոսը, որ ո՞վ է ան հարցնելէն ետքը ձախ կողմը կը դառնայ եւ նորէն կը քնանայ: Քանի մը ժամէն նորէն կ'արթնցնեն նորին վեհափառութիւնն, որուն չկրնար ներկայանալ մէկն առանց քսանրհինգ օր դռան առջեւ սպասելու: Վերջապէս կ'արժանանայ դէմն ելնել կաթողիկոսին, որ պարզապէս կը յայտնէ, թէ ինքը չէզոք ուրիւն պահել որոշած է այս գաղթականութեան խնդրոյն մէջ եւ այս յայտարարութիւնն ընելէն ետքը կը սկսի սանտրել իւր մօրութն:

Վահան վարդապետ Պայագիտ կը վերադառնայ այն օրերն, ուր Ռուսիոյ զօրքերը Պայագիտէն քաշուած էին եւ մեր զօրքերը մտնելու կ'ուշանային: Ժողովուրդը գաղթելու պատրաստուած, կը փնտռէ իր քեհեաները եւ քահանաները, զորս այցելուն վարպետութեամբ մը վանքին մէջ բանտարկած էր: Քանի մը գիւղեր միայն կը գաղթեն հակառակ ջանից Վահան վարդապետին, որ նորէն Բիւրական կ'երթայ ու կաթողիկոսին կը ներկայանայ ըսելով.

«Ձեր անհոգութեամբքը երկու երեք հազար տուն կորսուեցաւ. հարիւր քսան վարդապետ եւ հարիւր քսան հազար ոսկի ունենալով շուգեցիր օգնութեան հասնիլ քանի մը գիւղերու, որք Էջմիածնէն տասներկու ժամ միայն հեռաւորութիւն ունին: Անոնց արիւնը ձեր գլուխն ըլլայ»:

Կաթողիկոսը գլուխը քերեց:

Այս պաշտօնն ալ կատարելէն ետքը Փոթիի ճամբով Պոլիս եկաւ եւ տեղեկագիր մը ներկայացուց ս. պատրիարքին: Հիւանդութիւն մը եկաւ վրան եւ Պարտիզակ երթալով վեց ամիս ցաւով զբաղեցաւ:

Պատրիարքարանն, գոհ անոր մատուցած ծառայութիւններէն, 1879-ին պատուիրակութեան պաշտօնով Կարին երթալ հրամայեց իրեն. հրամանն անմիջապէս կատարեց շոգենաւ մտնելով: Հոն ընդհանուր ժողով գումարեց. հոն գրուեցաւ հռչակատր ծրագիրն, որ մատուցուեցաւ կայսերական քոմիսերներուն: Ասոնք ընելէն ետքը բարեկարգութիւններուն ձեռնարկեց: Երբ իմանար, որ գեղի մը մէջ հարստահարութիւն մը գործուած էր՝ իսկոյն նոյն գեղին քեհեաներն ու քահանաներն կանչել կու տար:

Ձեր գեղին մէջ ոչխարներ գողցուած են:

Հրամաներ էք, հայր սուրբ:

Քիրտերը գողցած են:

Ծառայ եմ, հայր սուրբ:

Ինչո՞ւ ուշադրութիւն չէք ըներ եւ թող կու տարք, որ խեղճ ժողովուրդը կողոպտուի:

Ծառայ եմ, հայր սուրբ, շուները չհաշեցին, որ իմանայինք:

Շուները ինչո՞ւ չպատժեցիք:

Ծառայ եմ, հայր սուրբ:

Սա ֆալախսան բերէք:

Ծառայ ենք, հայր սուրբ:

Եւ քանի մը քեհեաներ ու քահանաներ ֆալախայի տակ երգել կու տայ:

Պատրիարքարանը կ'իմանայ եւ կը գրէ իրեն, որ բարեկարգութիւնն առանց ֆալախայի ընէ. կը պատասխանէ, թէ անկարելի է, վասն զի, կ'ըսէ, այս մարդերն իրենց ոտներէն ատելի շուտ խօսք կը հասկընան քան թէ իրենց գլխէն:

Շատ իրաւացի է այս պատասխանը: Արիստիպպոս, գոր շուն արքունի կ'անուանէր Անտիսթենէսի աշակերտներէն անատակագոյնը, իր բարեկամներէն մէկուն համար երբ Դիոնեսիոսին կ'աղաչէր եւ չէր յաջողեր իր խնդիրքը լսելի

ընելու համար՝ անոր ոտներուն փարեցաւ: Ներկայ եղողներն երբ դիտողութիւն ըրին իրեն այս վարմունքին՝ յանցանքն ինս չէ, պատասխանեց, այլ Դիոնեսիոսին, որուն ականջներն ոտներուն վրայ են:

Չարմանալի է տեսնելն, որ այսօր ալ շատերուն ականջներն իրենց ոտներուն վրայ են: Այս ոտները համբոյր կ'ընդունին, եթէ հօգօր են, իսկ փայտ՝ եթէ տկար են: Մանաւանդ վերջին տարիներս համբոյրներն հարուստներու եւ ազդեցութեան տէր անձերու հողաթափի տեղ կը ծառայեն, ամէն օր կը կոխուին անոնց վրայ. իսկ բուն ականջներն կը գործածուին իբրեւ զարդ եւ կամ բան մը շլսելու համար:

Բնական էր, որ Վահան վարդապետին այս ընթացքն ապարդիւն չմնար, վասնզի ֆալախային տակէն ելնողներն առաջուան պէս չէին կրնար անտարբերութեամբ շարունակել իրենց պաշտօնը: Այս քահանաներն ու քեհեաներն իրենց գիղերը մտնելուն պէս, կը սկսին յորդորել ժողովուրդն, որ գողերու դէմ ինքզինքը պաշտպանէ. ամէն տեղ անձնապաշտպանութիւն կը քարոզեն, որպէսզի քիւրդերու յանցանքն իրենք չքաւեն ֆալախային տակ:

Վահան ժամը մինչեւ տասնըմէկ բարեկարգութիւն կ'ընէր եւ տասնըմէկէն ետքը օղի խմելու կ'երթար Յարութիւն եպիսկոպոսին քով, որ տասնըմէկէն առաջ կը սկսէր Բաքոսի արարողութիւններուն: Գործող եւ կտրուկ մարդ ըլլալն յայտնելու համար՝ Յարութիւն եպիսկոպոսին կատուն դրկեց ազգային վարչութեան ձեռամբ բանտարկուած վարժապետի մը, որ նամակ գրած էր աղաչելով, որ ազատեն բանտէն, վասնզի մուկերը պիտի ուտեն զինքը: Երբ Յարութիւն Եպիսկոպոսն իր կատուն հարցուց՝ Վահան վարդապետ պատասխանեց, թէ կրթական գործի մը ծառայեցուցած էր զայն:

Իւր պաշտօնն աւարտած ըլլալու համար, ֆրանսերէն տեղեկագիր մը կը հրատարակէ եւ Թրոթրին կու տայ: Այս տեղեկագրին մէջ հայերու վերքերուն վրայ կը դնէ իւր մատն՝ զոր ուրիշներն մատանիով կը պատուեն, եւ զոր մենք կը կտրենք անոր համար, որ մատանի չունինք:

Քանի մը ամիսներ Պոլսոյ փողոցներուն մէջ թափառելէն ետքը՝ Գատը գեղի քարոզչութեան պաշտօն կը տրուի իրեն: Այս գեղին ազգայիններն ոչ թէ միայն պատիւ չեն տար, այլ պատկելու համար սենեակ մ'ալ ցոյց չեն տար, եւ ինքը կը

ստիպուի, գիշեր մը քանի մը ժամ փողոցի մէջ մնալէն ետքը սենեակ մը ճարել եւ իւր գտած ընդունելութեան վրայ մտնտալ: Հետեւեալ օրը կը հրաժարի այս պաշտօնէն, եւ երբ Գատը գեղի ազգայիններն կը յայտնեն իրեն, թէ եթէ սենեակ մունենար սիրով պիտի ընդունէին զինքը՝ կը պատասխանէ, թէ կրիայ քարոզիչ մը ընտրեցէք դուք, որ ինչպէս կ'ըսէ շեմ յիշեր ով, ո'ւր ալ երթայ սենեակն հետը կը տանի:

Իւր սկզբունքներն են.

«Նախ համոզել, ապա հայիոյել, յետոյ սպառնալ եւ ետքը զարնել:

Մարդերն ուրախ եւ գուարթ ըլլալու են ամէն պարագայի մէջ:

Մեղք չգործելն Աստուծոյ յատուկ է, իսկ մեղանշելն ու գղջալը մարդու, հետեւապէս, այն մարդն, որ չմեղանշեր, մարդ չէ:

Իբրեւ փողոցի մարդ յաճախ կ'առաջարկէ մեծ պաշտօնեաներուն, երբ տանիքներն ալէք՝ ապականութիւնները փողոց մի՛ թափէք. վասն զի, կ'ըսէ, փողոցի վարչութիւնն ալ ունի իւր ապականութիւնները:

Շատախօսութեան այն աստիճան թշնամի է, որ եթէ իշխանութիւն ունենայ, բոլոր շատախօս երեսփոխանները լեզուներէն կը կախէ, որպէսզի ինքը միայն խօսի:

Վահան վարդապետ հիմակուհիմա փողոցները կը շափէ եւ օրուան ամէն ժամերուն յատուկ տեղեր ունի, բայց կեդրոնատեղին է Ղալաթիոյ օճախն, ուր ամէն օր կ'երթայ կէսօրին: Զինքը ճանաչելու համար բնաւ դժուարութիւն չկայ, երբ կը տեսնէք փողոցի մէջ երիտասարդ վարդապետ մը, որ ձեր երեսը նայելով աճապարանօք կ'երթայ, անմիջապէս ձեր մտքէն պիտի ըսէք.

Ես այն մարդուն բան մը ըրած չունիմ, ինչո՞ւ համար ինձի դէմ դատ բանալու կը վագէ: